[1] Դուրս գրման ամսաթիվ			**Հարկային հաշիվ** (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		Ա	9633934491
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Ցեղ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	52156218 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

26/06/2019 14:45:43

ՈՐՈՇՈՒՄ

դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

19 սեպտեմբերի, 2018թ. ք. Սպիտակ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ Գ.Հ.Մինասյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 52156218 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

18.08.2004 թվականին ծնված Գոհար Նարեկի Ավետիսյանի բանավոր հաղորդման որման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2012 թվականց մինչև 2018 թվականի հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում, Սպիտակ քաղաքի Կամոյի փողոցի 6 հասցեում վերջինիս հետ համատեղ բնակվող մորաքույրը՝ Լիլիթ Խառատյանը, Գոհար Ավետիսյանի նկատմամբ դրսևորելով դաժան վերաբերմունք՝ պարբերաբար ծեծի ենթարկելով նրան, այդ ճանապարհով անզգուշությամբ վերջինիս հասցրել է ինքնասպանության փորձի, ինչի արդյունքում Գ.Ավետիսյանը 2018 թվականի հուլիսի 17-ին, ժամը 11:00-ի սահմաններում Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 26 հասցեում գտնվող տատի՝ Քնարիկ Պետրոսյանի տանը, կյանքին վերջ տալու նպատակով խոհանոցային դանակով ձախ ճաճանչ-դաստակային հոդի շրջանը կտրել-վնասելով և «Անալգին» ու «Դիմեդրոլ» տեսակի հեղուկ դեղամիջոցներ խմելով, փորձել է գործել ինքնասպանություն:

Դեպքի առթիվ 2018 թվականի հուլիսի 27-ին ոստիկանության Սպիտակի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 52156218 քրեական գործը:

Նույն օրը քրեական գործն ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում Գոհար Ավետիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի փետրվարամսից մինչև 2014 թվականն ընկած ժամանակահատվածում մորաքույրը՝ Լիլիթ Խառատյանը, կենցաղային տարբեր պատճառներով իրեն պարբերաբար ծեծի է ենթարկել, շուրջ 4 անգամ զրկել է ազատությունից՝ պահելով տան նկուղում: Այնուհետև, 2018 թվականի հուլիսի 15-ին, ժամը 00:30-ի սահմաններում Սպիտակ քաղաքի Կամոյի փողոցի 6-րդ հասցեի իրենց տանը հեռախոսով անծանոթ տղայի հետ զրուցելու պատճառով մորաքույրը կրկին իրեն ծեծի է ենթարկել, շուրջ 8-9 անգամ ձեռքերով հարվածել է մարմնի տարբեր հատվածներին՝ գլխի, դեմքի, թևերի շրջաններին և մեկ անգամ էլ փայտով հարվածել է աջ թիակային հատվածին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ ու ֆիզիկական ցավ: Դրանից հետո գնացել է Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 26 հասցեում գտնվող տատի՝ Քնարիկ Պետրոսյանի տուն, որտեղ 2018 թվականի հուլիսի 17-ին, ժամը 11:00-ից 12:00-ի սահմաններում, մորաքրոջ կողմից իրեն ծեծի ենթարկելու պատճառով, կյանքին վերջ տալու նպատակով դանակով կտրել և վնասել է ձախ ձեռքի դաստակը, խմել «Անալգին» և «Դիմեդրոլ» տեսակի դեղորայքի 16 հատ սրվակների պարունակությունը:

Նկատի ունենալով, որ ինքնասպանության փորձին նախորդած ժամանակահատվածում Գոհար Ավետիսյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը, հուզական վիճակը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և դատական հոգեբանության բնագավառների հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 52156218 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին և ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին:
2. Փորձաքննությանը ներկայացնել տուժող Գոհար Նարեկի Ավետիսյանին, իսկ փորձաքննության ընթացքում՝ նաև քրեական գործի նյութերը և մեղադրյալի ամբուլատոր քարտը:
3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

- Ինքնասպանության փորձին նախորդող ժամանակահատվածում Գոհար Ավետիսյանը տառապե՞լ է արդյոք հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հիվանդությամբ.
- Ինքնասպանության փորձ կատարելու պահին Գոհար Ավետիսյանը կարո՞ղ էր հաշիվ տալ իր գործողությունների համար, կամ ղեկավարեր դրանք, նա մեղսունակ է եղել, թե ոչ.
- ի՞նչ հոգեվիճակում է գտնվել Գոհար Ավետիսյանն ինքնասպանության փորձին նախորդող ժամանակաշրջանում,
- անչափահաս Գոհար Ավետիսյանն ինքնասպանության փորձ կատարելիս գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում /հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա,
- ինչպիսի՞ անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի Գոհար Ավետիսյանը, որոնք կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա,
- Գոհար Ավետիսյանին բնորո՞շ են արդյոք այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ /օրինակ, բարձր ագրեսիվություն, դաժանություն, անվճռականություն, հարմարվողականություն, բարոյական կողմնորոշում, սոցիալական դիրքորոշում և այլն/ որոնցով պայմանավորվել է նրա կողմից ինքնասպանության փորձ գործելը,
- ո՞րն է եղել Գոհար Ավետիսյանի կողմից ինքնասպանության փորձ կատարելու դրդապատճառը, առկա է արդյոք պատճառահետևանքային կապ հնարավոր անձանց, մասնավորապես՝ Լիլիթ Խառատյանի գործողությունների և Գոհար Ավետիսյանի ինքնասպանության փորձին նախորդող հոգեվիճակի միջև,
- տուժող Գոհար Ավետիսյանին բնորո՞շ են այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել քննարկվող իրավիճակում նրա վարքի վրա՝ 2012 թվականի գարնանից մինչև 2018 թվականի հուլիսի 17-ն ընկած ժամանակահատվածում,
- հաշվի առնելով Գոհար Ավետիսյանի հոգեկան վիճակը, կարող էր նա ճիշտ ընկալեր գործի համար կարևոր հանգամանքները և վերարտադրեր դրանք:

Փորձագետներին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կատաքանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության արդյունքի ապահովման համար:

4. Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Սպիտակի քննչական բաժնի պետի տեղակալ *Գ.Հ.Միհեսյան*